

# ՏԱՂԿԱՀԱՅՔ

ԱՅԻ ՔԸՆԱՎԱՅԻՑ ՎԵՐԱՄՈԽՄՈՒԹԻՒՆԸ

ԹՈՅԼԱՏՐԵԼԻ Է

Կարդացի Պոլսոյ թերթերուն մէջ թէ կեդրոնական Վարչութեան Պատկառուելի Կրօնական ժողովը մէկ անդամէն միայն մի նիստով այրի քահանայից ամուսնութեան մասին իր վճիռն արձակեր է, որոշելով Սրբազն Հայրապետին այդ մասին բած հարցման ԲԱՅՍՈՍԱԿՈՆ պատասխան տալ: Զէ ուղեր հաւատալ թէ Կրօնական ժողովն այդքան անկարևոր կերպով վերաբերուի ծանրակշիռ խնդրոյ մը նկատմամբ որ կ'արժէր երկար, լուրջ և շրջանայեց խորհրդածութիւն: Սրբազնն Հայրապետը, որ ուրիշ շատ մը պարագաներու մէջ իր հայրապետական իւանունքով ամուսնական և այլ եկեղ. խնդիրներ լուծած էր, ի՞նկատ առնելով խնդրոյն մեծ կարևորութիւնը, պատշաճ դատած էր ո. Պոլսոյ և Երսւուազէմի Պատրիարքութեանց և Կելիկիոյ Կաթողիկոսութեան կարծիքն ու գաղափարն հասկնալ, լաւ դիտնալով որ խնդիրը կարեռը էր, և կարօտ խոհեմ ու երկար խորհրդածութեան մը, և թէ կարելի չէր մէկ, երկու նիստերով վերջնական վճիռ մ'արձակել, բայց Կրօնական Պատկառելի ժողովը միայն մի նիստով արձակած լմոցուցած էր: Սովոր անակնկալ մ'էր: Բայց ի՞նչ լուրջ փաստերու վրայ յենլով Կրօնական ժողովն այդպիսի վճիռ մը կ'արձակէր, այդ մասին ուեէ համոզիչ լուսաբանութիւն մը չկայ. անպատճառ Կրօնական ժողովոյ անդամ ըլլալու պէտք չկայ, գիտնալու համար թէ ի՞նչ վիճաբանութիւններ տեղի կընային ունենալ հոն, այն նստին մէջ. ուր որոշուեցաւ Բացարակ Բացասականը. եթէ կ'ուզէք՝ կարելի է ձեզ ներկայացնել այն հաւանական առարկաւթիւններն որք կընան եղած ըլլալ:

Հաւանականաբար, առաջին.—Չենք կընար Եկեղեցւոյ դաբաւոր օվէնքները վոխել, մեք այդ իրաւունքը չունինք:

Հաւանականաբար, Եկեղեց. — Որ քակէ զցանդ հայրենի խայթեոցէ զնա օձն անապատի:»

Հաւանականաբար, Երրորդ. — Եթէ այսօր այդպիսի որոշում մը տրուի, կ'քաջակերուին և ուրիշ փոփոխութիւններ ալ կ'ուզեն

ներմուծել նկեղեցւոյ մէջ, ևն. ևն., ուստի լաւ է որ բացասական պատասխան մը տրուի:

Երաւամը կ'յուսայինք և կ'սպասէինք որ գէթ Կրօնական ժողովոյ անդամք քահանայ հայրեռը, իրուեւ փորձառուներ, պաշտպանէին իրենց այրիացած կարգակից նղըաց դատը, պարզէին հնն այրի քահանայից թշուառ կացութիւնը, ներկայացնէին ժողովրդեան դժոնն ընթացքն հանդէպ այրի քահանայից, իրական փաստերով ապացուցանէին թէ այդ պատճառներով ինչ տեսակ չարիքներ տեղի ունեցած են, կ'ունենան և պիտի ունենան միշտ, և իրը հետեւանք ատոնց, ինչպէս նոր դուռ մը կ'բացուի քաղաքներու և թաղերու մէջ գայթակղութեան, և ինչպէս ժողովուրդը տակաւ կ'ուժանայ կրօնականէն, հետեւաբար և կրօնքէն: Թերեւ քահանայ անդամք փոքր ինչ ջանացած ըլլան պաշտպանել և թերեւ հակառակը պնդած և որոշած ըլլան Բացասականիր:

Բայց այդ որոշումով իննպեսը չե վերջանար, քանզի վերքը ծածկելով չէ որ պիտի բուժուի, այլ գեղ ու դարման պէտք է: Եթէ ատոնք զլացուին, վերքը կ'խորունկանայ, կ'ընդարձակուի, ուկորին կը համնի, ու հարկ կ'ըլլայ վիրաբուժական դժուարին գործողութեան մը, ուստի աւելի լաւ է այդ ծածկոյթը վերցնել, վերքը քննել և հարկ եղած բուժիչ դարմանն ընձեռնել, որպէս զի կարելի ըլլայ ապագայ աւերիչ բարոյական չարիքներու առաջքն առնել:

Երուսաղէմի Պատրիարքութիւնն և Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնն ալ Կեդրսնական Կրօնական ժողովոյ օրինակին հետեւելով միւնոյն Բացասական պատասխանը կրկնեցին. այժմ Կրօնական ժողովոյ հաւանական առարկութեանց քանի մը խօսքով պատասխանենք:

Առաջին. — Կեդրս Կրօն. Ժողովը լիազօր իրաւունքն ունի փոխելու և բարեփոխելու եկեղեցական այն օրէնքներն որոնք ունէ առնչութիւն չունին Կրօնի հիմնական վարդապետութեանց հետ: Եթէ այրիացեալ քահանայ մը կրկին ամուսնանայ, ատիկանկեղեցւոյ ոգւոյն չվնասելէ զատ մէկէ աւելի բարոյական և ֆիզիքական օգուտ պիտի ունենայ: Կրկին ամսւանացեալ քահանան բարոյապէս միշտ մաքուր ու պատկառելի պիտի ներկայանայ իր հօտին, սրուն առաջնորդնէ, իր ժողովուրդին, որուն ամէն խաւերուն, ամէն ցաւերուն մէջ մանելու և մօտէն հոգեոր ու բարոյական գարմաններ տալու պաշտօնն ունի: Երբ քահանայ մը այրի է ու ինքն իր բարոյական ցաւերն ու վիշտերն ունի. Երբ ինքը կարօտ է խորհուրդի ու դարմանի, ինչպէս կարող է

ուրիշն տալ այն, զոր ենքը չունի. Ժողովուրդն իրաւամբ չպիտի  
ըսէ անո՞ւ. «Բժիշկ, բժշկեա զանձն քո:»

Կրկին ամուսնացեալ քահանան ֆիզիքապէս առողջ պիտի  
ըլլայ, և պիտի կարենայ աւելի աշխուժիւ ու եռանդով կա-  
տարել իր քահանացական պաշտօնը, քանզի հարկ է գիտնալ  
թէ ով որ Բնութեան դէմ կ'մեղանչէ՝ անպատճառ պիտի առուժէ.  
Բնութիւնն իր իրաւունքը կ'պահանջէ, երբեք առարկութիւն,  
վեճաբանութիւն և բացասական պատասխան ընդունիր: Առաւուն  
երբ կ'արթննաք, նախաճաշի մը պէտք ունիք, բայց այնպիսի  
պարագաներու մեջ կ'գտնուիք որ նախաճաշը կ'բացակայի,  
ուստի առանց անոր կ'անցընէք, փոյթ չէ, կընաք համրերել.  
ճաշի ժամանակը կ'հասնի: Բնութիւնն իր իրաւունքը, պէտքը  
կ'զգացնէ, կընայ ըլլալ որ այն ցերեկ ճաշ աւ չընէք, բայց սատա-  
մաքոնիդ կ'պահանջէ. Բնութեան իրաւունքն ու օրէնքն է այդ  
որ երբ մարդ անօթնայ պէտք է ուտէ, երբ ծարաւի է պէտք է  
խմէ. սակայն չկայ, անօթի էք, ծարաւի էք, ահա կ'սկսիք ընդ-  
հանուր տկարութիւն մը զգալ, ուժերնիդ կ'պակսի, աչքերնիդ  
կ'նուազի, գոյներնիդ կ'գեղնի, ահաւասիկ չարաշար կ'առուժէք,  
քանզի Բնութեան դէմ մեղանչեցիք. Բնութիւնը խստագահանջ  
է, պէտք է գոհացնէք դինքը, եթէ չէք ուզեր վնասուիլ ֆիզի-  
քապէս. Բնութիւնն իր իրաւունքէն, իսեն պէտք եղածէն աւելի  
չե պահանջեր ձեզմէ. նա խիստ կ'սկը չափաւութիւնը, եթէ  
աւելի տաք իրեն, եթէ ուտելիքներով յղիանաք, նորէն կ'պատժէ  
զձեզ, գարձեալ տուժողը դուք կ'ըլլաք:

Երկրորդ.—Կրօնական ժողովն այսի քահանայից ամուսնու-  
թիւնը թոյլատը ելով երբեք հայրենի ցանդը չէր քակեր, այլ  
ընդհակառակն աւելի կ'ամրացնէր և այդու ոչ թէ օձերու  
խայթման, այլ լեզուներու օքնութեան կ'արժանանար և կերպիւ  
իւիք եկեղեցւոյ հին կարգերու վերահաստատման սատարած  
կ'ըլլար: Թերեւ աւելորդ ըլլայ այս առթիւ յիշել թէ եալիս-  
կոպսական ձեռնադրութեան Մաշտացին մէջ, ձեռնադրեալ  
առաջնորդին համար ձեռնադրող Հայրապեաը կ'հարցնէ թէ  
ամուսնացեալ է և կ'յաւելու թէ, եթէ ձեռնադրուելու ներ-  
կայացուած առաջնորդն ամուսնացեալ չէ, թող անիծեալ ըլլան  
թէ լինքն և թէ այն ժողովուրդն որուն կ'պատկանի այս առաջ-  
նորդը: Քահանան ըստ հոգեսորն ժողովուրդին առաջնորդն է,  
և եկեղեցւոյ վերոյիշեալ օրէնքին համեմատ անպատճառ պէտքը  
է ամուսնացած ըլլայ, որ կարենայ իր հոգեսոր առաջնորդու-  
թեան պաշտօնը լիովին կատարել: Կ'առնսնաք որ կրօնական ժո-  
ղովն այդ թոյլատուութեամբ հայրենի ցանդը պիտի ամրացնէր և

լքուած հին կտրգեցը վերահաստատէց: — Այը քահանայ մը երբ կ' փափագի ամսւսնանալ ու չի թոյլատրուիր իր պլատի և իր զաւակները խնամելու համար կ' հարկադրուի իր սուրբ կարգը թաղում և աշխարհականանալով ամուսնանալ, ուլայ համ Յոյն քահանայի պատկով, ահա հոս է որ հայունից ցանգը կ' բակաւի և պատասխանատւն անոնք կ' ըլլան որ բացասական պատասխանի մը ոստշման կ' յանգին: Աշխարհական մը կ' փափագի քահանայանալ, ըստ առառւածային հրամանի կ' ամուսնանայ, սակայն ժամանակ մը յետոյ իր երեց կինը կ' մեռնի, խեղճ քահանան, որ ուրախութեամբ ընդդրիած էր քահանայական Ս. պաշտօնը, կ' զջայ և նոյն իսկ կ' անիծէ իր ձեռնադրութեան օրը, քանզի հաշիւ ըրած չէր որ իր երեցկինն այսչափ կանուխ պիտի մեռնէր և առ հարկի պիտի սախառւէր իր սիրած, յարդած նուիրական պաշտօնը մէկ կողմ թողուլ որպէս զի առերևոյթ ցանգը ըքակուի, մինչդեռ իր այդ բնիշտացրով իրական ցանգն է որ կ' քուկուի ու ժողովրդեան հաւատքը կ' նուազի:

Երրորդ. — Կինայ ըլլալ որ այրի քահանայից վերամուռնութիւնն եթէ թոյլատրուի, ուրիշ խնդիրներ ևս ներկայանան. ո և է զրակոն օրէնք մը չի կրնար տեսկան և յաւ իտենական ըլլայ. ժոմանակիներու պահանջմանց համեմատ օրէնքները կ' ըստ բեկուսութին. ենթագրենք թէ սա օրէնք մ' է զոր ժամանակին Եկեղեցւոյ հարք սահմաներ են, ոստշելով սր քահանայք մի անգամ միայն ամուսնանան. այժմ կարելի է այդ փոխել, քանի որ ժուղովուրդն և քահանայք այդպէս կ' փափաքին և այդ փափաքելովնին Քրիստոսացիր կամ առաքելասահման օրէնքը մը զէմ չէ որ կ' գործեն, քանզի ո՛չ Աւետարանի և ոչ առ առաքելական թղթոց մէջ այդպիսի պատուէր մը, կանոն մը չենք տեսներ, այլ գարեր վերջը, դրէթէ է. զարուն, այդպիսի օրէնք մը կ' գրուի Եկեղեցւոյ կողմէ և այսօրուան Եկեղեցին ունի նոյն իրաւունքն ու իշխանութիւնը, ինչ որ է. գարու Եկեղեցին ունէր. ուրեմն այսօրուան Եկեղեցին ապագայ Եկեղեցւոյ զարգացումն ի նկատի ունենալով պարտաւոր է բարեփոխել այնպիսի օրէնքներ: Բաց աստի, Կրօն, Ժաղովը, հետեւելով Սըրազան Հայրապետին օրինակին, պարտաւոր էր այս խնդրոյ մասին Գաւառական Առաջնորդութեանց կարծիքն ևս հարցնել և ապա կարծիքնեցու մեծամասնութեան վրայ յենլով հաստատական կամ բացասական որոշումը տալ:

Երրուսաղիմ.

Եկեղեցական մը